SOCIAL STATE AND PROPERTY

Garnik Safaryan
Doctor of Law, Professor
Chief specialist of the Institute
Philosophy, Sociology and Law, NAS RA
Artur Davtyan
Applicant of the Institute of Philosophy,
Sociology and Law, NAS RA

SUMMARY

The authors interpret the concept and purpose of the welfare state as ensuring a decent life and free human development. According to the authors, the implementation of the principle of the welfare state is based on the fact that the majority of citizens of this society are quite capable of independently providing themselves with a decent standard of living. The basis for this is property and freedom of economic activity. In this regard, the authors argue that property is one of the "bridges" to human freedom, his relative independence from third parties and from the state.

Keywords: state, welfare state, property ownership, personal freedom, democracy, liberal democracy.

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արթուր Իկիլիկյան
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

Ժամանակակից որոշ գիտնականների կարծիքով նոր դարաշրջանում, հասարակական գիտակցության ձևերում առաջավոր ձև է դառնում արժեքային բաղկացուցիչը: «Արժեքային գիտակցությանը վիճակված էր դառնալ նոր դարաշրջանի առաջավոր աշխարհայացքը, որը նոր հազարամյակ էր բացում պատմական նոր դարաշրջանում»[1]:

[1] Տե՛ս **Розов Н.,** Ценности в проблемном мире; философские основания и социальные

Առկա են սոցիալական համակարգերի հետ հոգևոր արժեքների փոխհարաբերությունների երեք հիմնական բացատրություն: Առաջինը խոսում է իդեալները, արժեքները իրական իրականության մեջ մարմնավորելու մասին (Պլատն, Հեգել, Կանտ): Երկրորդը, հակառակը' հաստատում է գաղափարների ու արժեքների պայմանա-կանությունը նյութական կեցությամբ (Կ. Մարքս): Երրորդը' մեկը մյուսով չի պայմանավորում ու պնդում է ընդհանուր կենդանի սոցիոմշակույթում տարրերի փոխհարմարեցվածության հանգա-մանքը, ընդ որում գաղափարներն ու արժեքները սոցիալական գործընթացներին մասնակցում են այլ տարրերի հետ համատեղ (Ա. Վեբեր, Տ. Պարսոնս)[1]:

Աշխարհընկալման հիմնական ձևեր են հանդիսանում առասպելները, հավատալիքները, գաղափարախոսությունները: Այս ձևերից յուրաքանչյուրը մարդկային քաղաքակրթության շրջանակներում ունեցել է վերելքներ ու վայրէջքներ, խաղաղ կյանքի ու բուռն պայքարի ժամանակաշրջաններ: Ներկայումս աշխարհում դիտվում են արժեքային աշխարհընկալման հիմքերի պլուրալիզմ, ինչը օրակարգի մեջ է դնում դրանց պարտադիր հաղորդակցության ու համակեցության խնդիրը: Ընդ որում նման հաղորդակցությունը պետք է տեղի ունենա արժեքների լեզվով: Կարելի է համաձայնվել այն կարծիքի հետ, որ աշխարհի ընկալումը արժեքների լեզվով ծնվում է ազատական–ժողովրդավարական գաղափարախոսությունից, սա-կայն լուրջ կասկած է առաջացնում ազատական-ժողովրդավարական հայացքների հաղորդակցությանը: Ազատության, բանականության, քաղաքացիական հավասարության, իրավունքների ու ազատությունների արժեքները միշտ չէ, որ հանդես են գալիս այլ արժեքների հետ պայքարի գիտակցության ոլորտում ու այդ պատճառով էլ պայմանավորում են միայն իրենց իրացման հումանիտար և արդար

приложения конструктивной аксиологии. Новосибирск, 1998, էջ 12:

[1] Մանրամասն տե՛ս **Гайденко П. П.,** История новоевропейской философии в связи с наукой. М., 2000.

ուղիները: Կարելի է ենթադրել, որ ազատական գաղափարախոսության հիմքում ձևավորվում է արժեքային–իրավական նոր աշխարհայացք, որն ունի տոլերանտության բարձր աստիճան և որը սոցիալ-մշակութային տարածությունում տարածում է խաղաղ փոխհարաբերությունների ձևերը:

Հասարակության արժեքային ոլորտը չափելի չէ այս ոլորտում գիտնականների կողմից քննարկման համար առանձնացված խնդիրների հետ: Մարդկային ցեղի կեցության և զարգացման, դրա քաղաքակրթությունների ու մշակույթների խնդիրներն են, որ չափելի են բարոյականության ու իրավունքի արժեքների կառուցման հիմքերի հետ:

Իրավունքի ընդհանուր տեսությունը, հասարակական շատ առարկաների պես, բացատրում ու նկարագրում է իր սուբյեկտը: Դրա հետաքրքրության ոլորտում են գտնվում իրավունքի բնույթն ու ձևերը հասարակություն իրավական համակարգի գործունեությունը, իրավունքի աղբյուրները, իրավունքի փոխհարաբերությունը պետության հետ, օրենքի և իրավունքի հարաբերակցությունը և այլն: Գլխավոր խնդիրն այստեղ սովորաբար տեսնում են իրավական համակարգի ծագման, ՀՀ զարգացման և գործունեության օրինաչափությունների բացահայտման մեջ[1]: Այս օրինաչափությունների որոնումը ենթադրում է, որ հետազոտողը ասես գտնվում է իրավական համակարգից դուրս, մտքերով հեռանում է դրանից: Իրականում, սակայն, իրավագետը չի կարող գտնվել իրավական համակարգից դուրս: Նրա կողմից ներկայացվող տեսական գիտելիքը հանդիսանում է իրավական կեցության տարրը: Տեսաբանի ճանաչողական վերաբերմունքը կեցության նկատմամբ ցույց է տալիս նրա ընդգրկվածությունը այդ գոյությունում: Բացի այդ նրա ընդգրկվածությունը սահմանվում է իրավական կյանքի նկատմամբ նրա գործնական վերաբերմունքով: Վերջինն, այդ դեպքում հանդես է գալիս ոչ թե որպես հնարավոր ամենատարբեր օրինաչափություն-

[1] Տե՛ս **Нерсесянц В.С.,** Общая теория права и государства. Учебник для вузов. М., 2014, էջ 1-3:

ների ընդգրկողը, այլ որպես մարդկանց բազմազան պահանջմունք-ների աշխարհ: Այս պատճառով էլ իրավագետը պետք է ձգտի բացահայտել նյութական ու հոգևոր պահանջմունքների նշանակու-թյունը (բնականաբար կապված իրավունքի հետ) հասարակության, սոցիալական խմբերի ու անհատի կյանքի համար: Նշանակության կատեգորիայի նկարագրությունը տրամաբանորեն հանգեցնում է արժեքների, մասնավորապես արժեքների ու իրավագիտության խնդրի առաջադրմանը:

Հարկ է նշել, որ նախկինում, սկսած Արիստոտելից մինչև Լուսավորության գաղափարախոսությունը, աշխարհը բացահայտելու բարձրագույն կրեդո է հանդիսանում էպիստեմոլոգիական սկզբունքը, գլխավորը հանդիսանում էր գիտելիք-արտացոլանքի, գիտելիք-ճշմարտության ստացումը[1]: Գիտության նպատակը, որպես կանոն, հանդիսանում էր ճշմարտությունը, որն առանձնացված է աքսիոլոգիական ոլորտից:

Ժամանակակից գիտական առարկայի յուրացման գործում կեցության փոխարինումը արժեքով արտահայտում է գիտական ձևերի մոտեցումը արվեստին բնորոշ ստեղծագործական մեթոդների հետ: Սա տեղի է ունենում այն պատճառով, որ հենց արվեստի արժեքն է «բնակեցված» արժեքներով:

Իրավական ոլորտի առումով, սա նշանակում է իրավունքում ստեղծագործական դրսևորումների համար հիմքերի զարգացումը: Այս հիմքերը վերաբերում են, նախ և առաջ, օրենսդրական հիմքին, տեղական օրենսդրության զարգացմանը, սակայն, բացի այդ նշանակում է նաև իրավունքի նկատմամբ սուբյեկտի արժեքային նոր վերաբերմունքը: Այս վերաբերմունքը պետք է բնութագրվի մարդասիրության բարձր աստիճանով, մարդու իրավունքների ու ազատությունների հարգանքով:

Դասական տեսության ներկայացուցիչները, որպես իրենց

---

[1] Տե՛ս **Мальцева С.А., Антисери Д.** и **Реале Дж.,** Западная философия от истоков до наших дней. Античность и Средневековье, 1-2. СПб., 2006.

գիտության նպատակ են հռչակում սեփական սուբյեկտության ինքնավերացումը ճանաչողության արդյունքից, քանի որ սա անհրաժեշտ է սոցիալ-իրավական պրակտիկայի արդյունավետության համար, այն դեպքում, երբ այդ պրակտիկան, արտահայտվում է մարդկանց իրավական գիտակցության և իրավական զգացմունքների փոխհարաբերությունների միջև, այսինքն, վերջին հաշվով իրավական արժեքների:

Ժամանակակից գիտության, այդ թվում և իրավունքի տեսության համար հնարավոր ու ցանկալի է ուսումնասիրության իմացաբանական և արժեբանական չափանիշների միաձուլումը:

Իրավունքի աշխարհը ներկայանում է որպես արժեքների աշխարհ, որն անհատը ճանաչում և յուրացնում է իր հնարավորությունների սահմանում: Այդ պատճառով էլ ժամանակակից մարդու գործունեության ճանաչողական, գործնական ձևերը, սերտորեն միաձուլվում են արժեքային ընկալման հետ: Արժեքային կողմնորոշումը մարդուն ուղղորդում է դեպի իրավական փաստերի ծով, նախաձեռնում է նրա ճանաչողական գործունեությունը իրավունքում:

Այս առումով ուշադրության է արժանի ճանաչողության-ճշմարտության արժեքի ու ստացված արդյունքի հարաբերակցության մասին խնդիրը: Ոչ դասական գիտելիքը ուղղակիորեն մատնացույց է անում արժեքում իրականի ու անիրականի համընկնումը: Փոխակերպված, «սխալական» արժեքները, պատրանքներն ու մոլորությունները իրավունքում կյանքի օբյեկտիվ հանգամանքներն են, որոնք պահանջում են իրենց իմաստավորումը: Ոչ դասական մտածողությունն իրավական աքսիոլոգիայում նշանակում է իրավական արժեքների կախվածության որոնումը արժեքային համակարգի դրույթներից, ինչպես նաև իրավական «սխալ» արժեքների գոյության բնութագրից: Վերջինների ուսումնասիրության գործում ոչ պակաս կարևոր դեր է կատարում շրջապատող աշխարհի արժեքային ընկալման արդյունավետությունը՝ խմբային շահերի տեսանկյունից:

Իրավական աքսիոլոգիայի տեսության կառուցման նպատակով հարկավոր է ելնել ճանաչողական գործունեության զարգացման արդի մակարդակից: Անդրադառնալով սույն հոդվածում օգտագործվող մեթոդաբանության նկարագրությանը, չի կարելի չնշել, որ XX դարի 2-րդ կեսին ավարտվել է «ոչ դասական մտածողության» դարաշրջանը, որը դարասկզբին փոխարինել էր մոտ 300 տարի գերիշխած «դասական» մտածողությանը[1]: Այդ ժամանակ գիտության մեջ սկսեց ձևավորվել իմացաբանական նոր պարադիգմ, որը հիմնված էր իմացաբանական երկու սահմանումների՝ ոչ դասական և դասական սինթեզի վրա[2]: Ուշադրության է արժանի Ե. Կնյազևայի և Ա. Կուրդյումովայի սահմանումը. «Մտածողության սիներգետիկ ոճը՝ հետ-ոչ դասական մտածողության տեսակ է», որը հանդիսանում է աշխարհի դետերմինիստական և հարաբերական պատկերի դրական տարրերի յուրօրինակ սինթեզը»[3]:

Գիտական մեթոդաբանության ամերիկացի հետազոտող Ու. Ուիվերը գիտական մտքի պատմության մեջ առանձնացրել է երեք փուլ, «դասական», որը նա բնութագրել է, որպես «կազմակերպական պարզություն», «ոչ դասական», որը հիմնված է հարաբերականության տեսության և քվանտային մեխանիկայի վրա և որը շեշտադրում է «ոչ կազմակերպական բարդությունը» և հետ «ոչ դասականը» (հետ–ոչ դասականը), որը ձևավորվում է կիբերնետիկայի ոլորտում կատարված բացահայտումների, տեղեկատվության տեսության և համակարգերի տեսության վրա և որը սահմանվում է, որպես «կազմակերպական բարդություն»[4]: Գոյություն ունեն մի շարք օրինակներ, թե ինչպես է մարդկային գործունեության տարբեր ոլորտներում նկատվում այս նոր պարադիգմին անցնելու կոնկրետ ձևերը:

---

[1] Մանրամասն տե՛ս **Овчинников А. И.,** Правовое мышление в герненевтической парадигме. Ростов н/Дону, 2002.

[2] Տե՛ս **Каган М. С.,** Философская теория ценности. Спб, 1997, էջ 45:

[3] Տե՛ս **Князева Е.Н., Курдюмов С. П.,** Законы эволюции и самооганизации сложных систем. **М., 1994,** էջ 7:

[4] Տե՛ս **Weaver W.,** Science and complexity. "American Scientist", vol. 36, N2, 1948, էջ 28:

Այս մեթոդաբանության նկարագրության մեջ չի կարելի հաշվի չառնել սիներգետիկայի ձեռքբերումները, որոնք համակարգերի տեսությունների սկզբունքները զարգացնում են զարգացման գործընթացների նկատմամբ ու հիմնավորում են ներդաշնակության ու քաոսի նոր ընկալումը[1]: Սիներգետիկ օրինաչափությունների կիրառման արդյունավետությունը սոցիոմշակութային գործընթացների ուսումնասիրությունների գործում, ինչպես նաև ներկայումս օրենքների բարդ համակարգերի զարգացումը կասկածի ենթակա չէ[2]: Վերջին ուսումնասիրությունները հստակ պատկերացում են տալիս համակարգային ներընդգրկված մտածողության մասին, որը ներկայումս ձևավորվում է հոգևոր գործունեության բոլոր մակարդակներում՝ հաղթահարելով դրանց երբեմնի ցրվածությունն ու ինքնամեկուսացումը:

Արդի ժամանակաշրջանում հասարակագիտության մեջ տեղի է ունենում արմատական շարժ: Սկսվող «ոչ դասական» ժամանակաշրջանն իր հետ արմատական փոփոխություններ է բերել սոցիումի հոգևոր յուրացման մոտեցումների մեջ: Շատ ավելի մեծ զարգացում է ստանում այն սկզբունքը, որի համաձայն «ցանկացած հանգամանքներում ճանաչողական էքսպանսիան պետք է մարդասիրական արդարացում ստանա»[3]:

Գոյությունն, ընդհանրապես հանդիսանում է «արժեքային-նպատակային» մարմնավորում ու «աշխարհը չափվում է արժեքներով»: Սրանով է բացատրվում «ճանաչողություն-գնահատում» հարաբերությունների մանրամասն ուսումնասիրության հարաբերակցությունը, աշխարհին ընդհանրապես, ինչպես նաև իրավունքի աշխարհը «չափելու» անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, աքսիոլոգիական խնդիրների վերլուծությունը ինքնանպատակ չէ ու կոչված է նպաստել իրավունքի բնույթի, էության

---

[1] **Шундников К.В.,** Синергетический подход в правоведении. Проблемы методологии и опыт теоретического применения. М., 2013.

[2] **Каган М. С.,** Философская теория ценности. С. П., 1997, էջ 47:

[3] Տե՛ս **Ильин В. В., Папарин А. С.**, Философия политики, М., 1994, էջ 182-184:

ու հիմքերի պարզաբանմանը:Աքսիոլոգիական մոտեցման կիրառությունը իրավունքում անխուսափելիորեն հանգեցնում է իրավունքի բնույթի վերլուծությանը[1]:

Ա. Լ. Դոբրոխոտովը կարծում է, որ Արևմուտքում իրավունքի տեսական հիմնավորումը կրկին արդիական խնդիր է դարձել, ինչպես նշում է հեղինակը սահմանումների «վերաբաշխման ճգնաժամի» պատճառով, որը հանգեցրել է իրավունքի հասկացության անորոշեցմանը»[2]: Սա թելադրում է անհրաժեշտությունը, չսահմանափակվելով դոգմատիկ մակարդակում գոյություն ունեցող իրավական նյութի առկայության ընդհանրացմամբ, գիտական մտքով «առաջ է մղվում», նախ և առաջ իրավունքի արժեքի ու նշանակության, հասարակության, մարդու կյանքում դրա առաքելության ընկալմանը: Բացի այդ, ամենից բարդ ու դժվար գործը հանդիսանում է իրավագիտության արժեքի փիլիսոփայական իմաստավորումը՝ իրավունքի դոգմաները, դրա փիլիսոփայական վերամբարձությունը[3]:

Տեսական իրավական խնդրի նկատմամբ նման մոտեցումը կոչված է հաղթահարել իրավական գիտելիքների և իրավունքի փիլիսոփայության միջև առկա բազմադարյա բացերը: Այն նշված է Ի. Կանտի փիլիսոփայական մշակումների սահմանումներում ու հատկանշական է XX դարի սկզբի իրավական մտքի համար[4]:

Իրավունքի բնույթի ընկալման մոտեցում է հանդիսանում դրա դիտարկումը որպես օրենքում նյութականորեն պայմանավորված և առաջադրված իշխող սոցիալական խմբի (շերտի, դասի) տնտեսական ու քաղաքական կամք: Այս առումով կարևոր է իրավունքի նյութականորեն պայմանավորված մեխանիզմը: Օբյեկտիվ

---

[1] Տե՛ս **Леонтьев Д. А.,** Ценность как междисциплинарное понятие; опыт многомерной реконструкции. // Современный социоанализ. М., 1996, էջ 25:

[2] Տե՛ս **Доброхотов А. Л.,** Рецензия на сочинения И. Г. Фихте //Вопросы философии. 2013, № 3. էջ 11-12:

[3] Տե՛ս **Алексеев С. С.,** Самое Святое, что есть у Бога на Земле: И Кант и проблема права в современную эпоху. М. 1998, էջ 408:

[4] Մանրամասն տե՛ս **Захарцев С. И.,** Некоторые проблемы теории и философии права. М., 2014:

գործոնները իրավունքի վրա չեն գործում ինքնավար և ուղղակի ազդեցություն: Դրանք միջնորդավորվում են հոգևոր գործոններով: Հենց այստեղ են իրենց դրսևորում մարդկանց և սոցիալական խմբերի արժեքներն ու արժեքային միտումները, այդ թվում և արդարության նրանց չափանիշները: Իրավունքի վերացական և բնույթային այս ընկալումից հարկավոր է անցում կատարել դեպի դրա կոնկրետ, պրակտիկ-հոգևոր ընկալմանը, որպես աշխարհընկալման արժեքային–նորմատիվ միջոց, որն ունի գոյության, միաժամանակ երկու մակարդակ, աբստրակտ-նդհանուր (կատարյալ, իրավական նորմերը, որպես վարքագծի նմուշ) և իրական (մարդկանց իրավական վարքագիծը, իրավունքը սոցիոմշակութային մակարդակով, իրավունքը, որպես կոնկրետ իրավական սուբյեկտի ներքին արժեք)[1]:

Իրավունքի նկատմամբ դիխոտոմիական նման հայացքը թույլ է տալիս այն դիտարկել, որպես կենդանի, դինամիկ երևույթ: Իրավունքը պետք է ընկալվի որպես ոչ թե ստատիկ նորմերի հավաքածու, այլ որպես գործընթաց: Իրավական նորմատիվությունն այստեղ մեկնաբանվում է, որպես հասարակական պրակտիկայում մասնակցություն ունեցող անհատի հատուկ որակ: Իրավունքի գոյության երկու ձևերի միասնականությունն ապահովվում է օրենքի և օրենքի սկզբունքի միջոցով: Պրակտիկորեն գոյություն ունեցող անհատական իրավական նորմատիվները ընդհանուր մոդելին պետք է համապատասխանեն այն ձևով, ինչպես որ հայտարարված է օրենքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում հեղինակը ժամանակակից արժեբանության տեսանկյունից քննարկել է արժեքների հիմնական տեսությունները իրավաբանական արժեբանության մեջ: Սա հնարավորություն է տալիս պրակտիկ իրավաբանին և տեսաբանին իրավունքի հարցերը դիտարկել արժեբանության տեսանկյունիից, օրինակ՝ օրենսդրությունը, իրավաստեղծ գործունեությունը, արդարադատությունը, իրավակիրառ և դատական պրակտիկան և այլն: Նման պարագայում

[1]Տե՛ս **Ստեփանյան Հ. Մ.,** Իրավունքի գոյաբանություն: Երևան, 2012, էջ 111-112:

ոչ միայն ընդլայնվում է իրավագետի մտահորիզոնը, այլև նպաստում է իրավական կնճռոտ հարցադրումներին առավել համարժեք լուծումներ գտնելու համար:

Բանալի բառեր. իրավունք, օրենսդրություն, արժեք, արժեհամակարգ, իրավակիրառ գործունեություն, դատական պրակտիկա, իրավական մտածողություն, սոցիալական բարիք:

ОСНОВНОЕ ТЕОРИИ ЦЕННОСТЕЙ В ЮРИДИЧЕСКОЙ АКСИОЛОГИИ

Артур Икиликян
Кандидат юридических наук,
Докторант Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В данной статье автор обстоятельно рассматривает основные теории ценностей в юридической аксиологии. Это позволяет практическим работникам и теоретикам рассматривать правовые вопросы в аксиологическом аспекте, например вопросы связанные с законодательным процессом, правосудием, правоприменительной практико и т.д.

В данном случае не только расширяется кругозор юриста, но и помогает ему принимать адекватное решение в правовых вопросах.

Ключевые слова: право, законодательство, правотворчество, судебная практика, правоприменительная деятельность, правовое мышление, социальное благо.

BASIC THEORIES OF VALUES IN LEGAL AXIOLOGY

Artur Ikilikyan
Phd in law
Doctoral student of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

In this article, the author thoroughly examines the basic theory of values in legal axiology. This allows practitioners and theoreticians to consider

legal issues also in an axiological aspect, for example, issues related to the legislative process, justice, law enforcement practice, etc.

In this case, not only the lawyer's outlook broadens, but also helps him to make an adequate decision in legal matters.

Keywords: law, legislation, lawmaking, judicial, law enforcement practice.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աբրահամ Աբրահամյան
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Եվրասիական տնտեսական միության ստեղծումը պայմանավորված է պետությունների կողմից տնտեսական ինտեգրման գործընթացների իրականացման անհրաժեշտությամբ:

Ընդ որում, այս կազմակերպության կազմավորման և գործունեության հիմքում անհրաժեշտ է առանձնացնել բացառապես տնտեսական բաղադրիչ բովանդակող հետևյալ երեք փուլերը, դրանք են՝ ա) մաքսային միությունը և ապրանքների ընդհանուր շուկան, բ) պետությունների միասնական ներքին շուկա՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալների և անձանց ազատ տեղաշարժման հնարավորությամբ, գ) համաձայնեցված արժութային քաղաքականության իրականացում:

Սակայն, հետագայում չպետք է բացառել կամ կարելի է կանխատեսել նաև արդեն Եվրասիական միության շրջանակում քաղաքական ինտեգրման միության ստեղծման հնարավորությունը:

Թեև, կարևորելով քաղաքական ինտեգրացիայի նշանակությունը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատել, որ դա ամենից առաջ պետք